# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

12 հունվարի 2026 թվականի թիվ 2-Ա

ք.Երևան

### «ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2025 թվականի դեկտեմբերի 10-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 67 վարչական վարույթի նյութերը, պարզեց.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս և հիմք ընդունելով Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը, 2025 թվականի նոյեմբերի 20-ի թիվ Ե/03/03.1/929-25 գրությամբ «ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊ ընկերությունից (այսուհետ՝ նաև Հեռարձակող կամ Ընկերություն) պահանջել է Հանձնաժողով ներկայացնել իր կողմից հեռարձակվող «ՄԻԳ ՌԱԴԻՈ» լսողական ծրագրի (այսուհետ նաև՝ Լսողական ծրագիր) նոյեմբերի 13-ից 19-ն ընկած ժամանակահատվածի ձայնագրությունը:

Ի պատասխան վերոնշյալ գրության՝ Հեռարձակողը 2025 թվականի նոյեմբերի 26-ին մուտքագրված գրությամբ (մուտքի հ/հ ՄԳ/1016-25) Հանձնաժողով է ներկայացրել «ՄԻԳ ՌԱԴԻՈ» լսողական ծրագրի պահանջված ձայնագրությունը:

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության ծրագրերի մոնիտորինգի բաժինը 2025 թվականի դեկտեմբերի 4-ին, 5-ին, 8-ին և 9-ին իրականացրել է Լսողական ծրագրի 2025 թվականի նոյեմբերի 13-ի և 14-ի ձայնագրությունների մշտադիտարկում: Մշտադիտարկումների արդյունքում հայտնաբերվել են «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի $7^3$-րդ մասի դրույթների պահանջների առերևույթ խախտման հատկանիշներ, և 2025 թվականի դեկտեմբերի 10-ին կազմվել է մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն (այսուհետ՝ Արձանագրություն):

Ըստ Արձանագրության՝ 2025 թվականի նոյեմբերի 13-ի և 14-ին հեռարձակվել են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի գովազդներ, որոնցում չեն նշվել կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը, մասնավորապես՝

13.12.2025թ.

«Ա. ՕՀԱՆՅԱՆ» կլինիկա՝ ըստ Ընկերության կողմից ներկայացված ձայնագրությունների խրոնոմետրաժի 561:43:11-561:43:51, 570:38:00-570:38:40, 572:43:34-572:44:14, 574:17:25-574:18:05, 577:58:37-578:59:17, 579:44:00-579:44:40, 582:17:51-582:18:30, 585:18:04-585:18:44 հատվածներում.

«ԹԻՎ 2» ստոմատոլոգիակա կլինիկա՝ ըստ Ընկերության կողմից ներկայացված ձայնագրությունների խրոնոմետրաժի 571:00:30-571:01:10, 575:53:29-575:54:09, 578:55:41-578:56:21, 581:14:40-581:15:20, 583:45:40-584:46:20 հատվածներում.

侈ԼՈՌԻՄԵԴ值 բժշկական կենտրոն՝ ըստ Ընկերության կողմից ներկայացված ձայնագրությունների խրոնոմետրաժի 570:29:28-570:29:48, 572:31:04-572:31:24, 575:32:45-575:33:05, 577:28:50-577:29:10, 579:31:07-579:31:27, 584:46:38-584:46:58 հատվածներում.

侈ԿԱՐԴԻՈ ՎԻՏԱ值 սրտաբանական կենտրոն՝ ըստ Ընկերության կողմից ներկայացված ձայնագրությունների խրոնոմետրաժի 561:57:50-561:58:35, 569:17:04-569:17:49, 571:17:48-571:18:32, 571:53:00-571:53:45, 572:17:27-572:18:12, 573:12:27-573:13:12, 574:52:42-574:53:26, 575:17:02-575:17:47, 576:18:57-576:19:41, 577:38:00-577:38:45, 579:20:04-579:20:49, 580:13:54-580:14:38, 580:43:15-580:44:00, 583:12:47-583:13:32, 584:12:28-584:13:12 հատվածներում:

14.12.2025թ.

«Ա. ՕՀԱՆՅԱՆ» կլինիկա՝ ըստ Ընկերության կողմից ներկայացված ձայնագրությունների խրոնոմետրաժի 585:43:23-585:44:03, 594:37:52-594:38:32, 596:45:36-596:46:16, 598:19:00-598:19:40, 601:58:45-601:59:25, 603:44:06-604:44:46, 606:18:18-606:18:58, 609:18:41-609:19:21 հատվածներում.

«ԹԻՎ 2» ստոմատոլոգիական կլինիկա՝ ըստ Ընկերության կողմից ներկայացված ձայնագրությունների խրոնոմետրաժի 594:58:38-594:59:18, 599:53:05-599:53:45, 602:52:58-602:54:38, 605:16:40-605:17:20, 607:44:45-607:45:24 հատվածներում.

侈ԼՈՌԻՄԵԴ值 բժշկական կենտրոն՝ ըստ Ընկերության կողմից ներկայացված ձայնագրությունների խրոնոմետրաժի 594:28:51-594:29:11, 596:29:35-596:29:55, 599:33:22-599:33:42, 601:29:11-601:29:31, 603:32:45-603:33:05, 608:46:08-608:46:28 հատվածներում.

侈ԿԱՐԴԻՈ ՎԻՏԱ值 սրտաբանական կենտրոն՝ ըստ Ընկերության կողմից ներկայացված ձայնագրությունների խրոնոմետրաժի 585:57:51-585:58:36, 593:16:43-593:17:28, 595:18:33-595:19:17, 595:52:48-595:53:33, 596:19:39-596:20:23, 597:13:44-597:14:29, 598:53:33-598:54:18, 599:18:15-599:19:59, 600:18:45-600:19:30, 601:36:40-601:37:25, 603:17:22-603:18:07, 604:11:36-604:12:21, 604:41:53-604:42:38, 607:12:07-607:12:52, 608:11:46-608:12:31 հատվածներում:

Համաձայն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի՝ Արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես ապացույց:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով 2025 թվականի դեկտեմբերի 10-ին կազմված Արձանագրությունը և ղեկավարվելով «Վարչարարության

հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2025 թվականի դեկտեմբերի 10-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 67 վարչական վարույթը։

Հանձաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2025 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ Ե/04/04.1/1010-25 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող է ներկայացնել իր պարզաբանումները և բացատրությունները։

Հեռարձակողը նշված գրության և հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 2025 թվականի դեկտեմբերի 15-ի գրությամբ (մուտքագրված՝ 22.12.2025թ., թիվ ՄԳ/1066-25 գրություն) Հանձնաժողով է ներկայացրել պարզաբանում։

Մասնավորապես՝ պարզաբանման մեջ նշված է հետևյալը.

*«(…) «ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ-ն որպես տեսալսողական մեդիածառայություն մատուցող, գիտակցում և ընդունում է, որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների գովազդի հեռարձակման ընթացքում թույլ է տրվել «Գովազդի մասին» և «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքների պահանջների խախտում՝ գովազդում պարտադիր նշվող տվյալների՝ կազմակերպությունների գործունեության լիցենզիայի համարի և տրամադրման ամսաթվի չհնչեցման մասով։*

*Միաժամանակ հայտնում ենք, որ «ԼոռիՄեդ» ՍՊԸ, «Այծեմնիկ Օհանյան» ԱՁ, «ԿԱՐԴԻՈՎԻՏԱ» ՍՊԸ և «Վանաձորի թիվ 2 ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՊՓԲԸ կազմակերպությունները նախապես՝ մինչև գովազդի հեռարձակումը, ներկայացրել են իրենց գործունեության լիցենզիաները, որոնց լուսապատճեները առկա են «ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ-ում։ Նշված կազմակերպությունները հանդիսանում են օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված սուբյեկտներ, ինչի կապակցությամբ գովազդի բովանդակությունը չի պարունակել լիցենզավորման փաստի բացակայություն կամ սպառողին մոլորեցնելու հանգամանք։*

*Թույլ տրված խախտումը կրում է ոչ դիտավորյալ բնույթ, քանի որ գովազդում չի բացակայել օրենսդրորեն թույլատրելի գործունեություն իրականացնելու փաստը, այլ միայն տեխնիկական թերացման հետևանքով գովազդի վերջնամասում չի հնչեցվել լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը։*

*Նշված գովազդները հեռարձակվել են սահմանափակ ժամանակահատվածում՝ շուրջ մեկուկես ամիս, և տվյալ պահին այլևս չեն հեռարձակվում։ Խախտման արձանագրումից անմիջապես հետո ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ գովազդների հեռարձակումը դադարեցնելու և դրանք օրենսդրական պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ։*

*Հարկ ենք համարում ընդգծել, որ «ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ-ի 25 տարվա գործունեության ընթացքում սա առաջին իրավախախտումն է, ինչը վկայում է տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ մեր հետևողական և բարեխիղճ վերաբերմունքի մասին։*

*Բացի այդ, վերանայվել և ուժեղացվել են ներքին վերահսկողական ընթացակարգերը՝ գովազդային նյութերի նախնական իրավական համապատասխանության ստուգման մասով, որպեսզի հետագայում բացառվեն նմանատիպ խախտումները։*

*Հաշվի առնելով խախտման դիտավորության իսպառ բացակայությունն ու դրա ձևային (տեխնիկական) բնույթը, դրա առաջին անգամ կատարված լինելը, գովազդների սահմանափակ ժամանակահատվածում հեռարձակված և ներկայումս դադարեցված լինելը, ինչպես նաև այն հանգամանքը, որ գովազդվող կազմակերպությունները լիցենզավորված են և լիցենզիաները ներկայացված են եղել նախապես՝ խնդրում ենք վարչական պատասխանատվության միջոցի ընտրության հարցում կիրառել համաչափության և անհատականացման սկզբունքները և հնարավորության դեպքում սահմանափակվել զգուշացմամբ։»։*

Պարզաբանումներին կից ներկայացրել է նաև գովազդվող կազմակերպությունների լիցենզիաների լուսապատճենները։

*Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.*

*Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.*

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը։»։

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետը սահմանում է.

«22) տեսալսողական գովազդ՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումը Հեռարձակողի միջոցով, որը շահույթ ստանալու նպատակով կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, ապրանքների, ծառայությունների, գաղափարների կամ նախաձեռնությունների նկատմամբ.»։

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է.

«Հեռարձակողների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է սույն օրենքի և «Գովազդի մասին» օրենքի պահանջներին համապատասխան։»։

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում։

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման,

իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են.

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»:

Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:»:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 11-րդ կետերը սահմանում են.

«1) բժշկական օգնություն և սպասարկում՝ բնակչությանը խորհրդատվական, կանխարգելիչ, բուժական, պալիատիվ, դեղորայքային օգնության ցուցաբերում, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացում, հարբժշկական և ոչ բուժական բնույթի ծառայությունների մատուցում.

11) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բժշկական օգնության և սպասարկման որոշակի տեսակ կամ տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից, սեփականության ձևից, կամ պետական կամ համայնքային հիմնարկ.»:

Նույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներն իրավունք ունեն ցուցաբերելու համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում լիցենզավորված տեսակների շրջանակներում համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:»:

«Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի $7^3$-րդ մասը սահմանում է.

«Բժշկական օգնություն և սպասարկում, դեղատնային գործունեություն, դեղերի արտադրություն, դեղերի մեծածախ իրացում, բժշկական միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի գովազդման ժամանակ գովազդում պարտադիր պետք է նշվեն կազմակերպության կամ

անհատ ձեռնարկատիրոջ գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը:»։

«Գովազդի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեսալսողական մեդիայի ոլորտում գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է:

*Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը , ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.*

Հեռարձակողը գովազդ հեռարձակելիս պարտավոր էր պահպանել Օրենքով և «Գովազդի մասին» օրենքով գովազդի առանձնահատկությունները սահմանող այն դրույթները, որոնք սահմանում են գովազդի հեռարձակման որոշակի պահանջներ ու սահմանափակումներ, և այս վարույթի շրջանակներում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի $7^3$-րդ մասի պահանջները՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների գովազդ հեռարձակելիս պարտադիր պետք է նշեր դրանց գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը։

Քննարկվող համատեքստում Հեռարձակողը 2017 թվականից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ (սփռման տարածքը և հաճախականությունը՝ ՀՀ, Լոռու մարզ.՝ ք.Ստեփանավան՝ 103.1 ՄՀց, ք.Սպիտակ՝ 100.3 ՄՀց, ք.Վանաձոր՝ 105.7 ՄՀց, գ.Սանահին՝ 102.5 ՄՀց, ք.Ախթալա՝ 91.3 ՄՀց , լիցենզիայի համարը՝ N 247, գործողության ժամկետը՝ 06.10.2017թ.-06.10.2027թ.), որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար։

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են վարքագծի կանոններ, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, ինչպես նաև Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար՝ սույն պարագայում՝ Հեռարձակողը պարտավոր էր պահպանել «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի $7^3$-րդ մասով սահմանված դրույթների պահանջները, այն է՝ բժշկական օգնություն և սպասարկում, դեղատնային գործունեություն, դեղերի արտադրություն, բժշկական միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի գովազդման ժամանակ գովազդում պարտադիր պետք է նշվեն կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը:

«Գովազդի մասին» օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է «գովազդ» հասկացությունը, համաձայն որի՝ գովազդ՝ տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին

տեղեկությունների տարածումն անորոշ թվով անձանց շրջանում, որը կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

Գովազդը պետք է գովազդվող օբյեկտի նկատմամբ ձևավորի կամ պահպանի հետաքրքրությունը:

Հարկ ենք համարում նշել, որ «Տեսալսողական մեդիայի մասին» և «Գովազդի մասին» օրենքները հստակ տալիս են *գովազդի* մասին սահմանումը, ինչպես նաև «Գովազդի մասին» օրենքով նշվում են ապրանքների առանձին տեսակների գովազդի առանձնահատկությունները:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի սահմանող դրույթները և ձեռք բերված փաստերը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողը գովազդ հեռարձակելիս պարտավոր էր պահպանել «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի $7^3$-րդ մասի դրույթների պահանջները:

Հանձնաժողովն ուսումնասիրել է Հեռարձակողի ներկայացված պարզաբանումները, համաձայն որոնց՝ Հեռարձակողն ընդունել է, որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների գովազդի հեռարձակման ընթացքում թույլ է տվել «Գովազդի մասին» և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքների պահանջների խախտում՝ չնշելով գովազդում կազմակերպությունների գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը: Միաժամանակ հայտնել է, որ «ԼոռիՄեդ» ՍՊԸ, «Այծեմնիկ Օհանյան» ԱՁ, «ԿԱՐԴԻՈՎԻՏԱ» ՍՊԸ և «Վանաձորի թիվ 2 ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՊՓԲԸ կազմակերպությունները նախապես՝ մինչև գովազդի հեռարձակումը, ներկայացրել են իրենց գործունեության լիցենզիաները, ըստ որոնց՝ դրանք հանդիսանում են օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված սուբյեկտներ, և գովազդում վերջիններիս գործունեության լիցենզիաների համարները և տրամադրման ամսաթվերը չնշելը չի ենթադրում, որ դրանք առկա չեն, կամ առկա է դիտավորություն, կամ սպառողին մոլորեցնելու նպատակ է հետապնդվել, այլ նշվածը տեղի է ունեցել տեխնիկական թերացման արդյունքում: Հայտնել է նաև, որ միջոցներ է ձեռնարկել խախտման վերացման ուղղությամբ, միաժամանակ խնդրել է հաշվի առնել, որ քանի որ խախատումը թույլ է տրվել առաջին անգամ, կիրառել նախազգուշացում:

Անդրադառնալով Հեռարձակողի՝ իրավախախտումն առաջին անգամ կատարելու հանգամանքը նշելով գրավոր նախազգուշացում կիրառելու մասին ներկայացրած խնդրանքին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր նախազգուշացումը՝ որպես վարչական պատասխանատվության միջոց, կիրառվում է միայն այն դեպքերում, երբ կատարված իրավախախտման համար նույն Օրենքով վարչական տույժ՝ տուգանք նախատեսված չէ:

Մինչդեռ սույն վարչական վարույթում արձանագրված իրավախախտումը՝ «Գովազդի մասին» օրենքի դրույթի խախտումը, համաձայն Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասի, ենթակա է կոնկրետ վարչական

պատասխանատվության միջոցի՝ տուգանքի կիրառման։ Հետևաբար, քանի որ արձանագրված խախտման համար օրենքով արդեն սահմանված է կոնկրետ տուգանք, Օրենքի 56-րդ հոդվածի դրույթների կիրառման և, համապատասխանաբար, գրավոր նախազգուշացման կիրառման իրավական հիմքեր բացակայում են։

Հարկ է նշել, որ հաշվի առնելով վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողի ներկայացրած պարզաբանումն այն մասին, որ խախտումը տեխնիկական խնդրի հետևանք է, առկա չէ դիտավորություն կամ սպառողին մոլորեցնելու միտում, և Արձանագրությունը ստանալուց հետո շտկվել են նշված տեսալսողական հաղորդման ընթացքում թույլ տրված սխալները, բավարար հիմք չի կարող հանդիսանալ Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված իրավախախտումը չարձանագրելու և պատասխանատվությունը չկիրառելու համար։

Մասնավորապես՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի
9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, *մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի* գործողությունը կամ *անգործությունը*, *որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն*:

Նույն օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է *դիտավորությամբ կատարված*, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

Իսկ նույն օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ *վարչական իրավախախտումը համարվում է անզգուշությամբ կատարված, եթե այն կատարած անձը չի կանխատեսել վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև պարտավոր էր և կարող էր կանխատեսել դրանք*:

Վերոգրյալ իրավական դրույթներից հետևում է, որ վարչական իրավախախտումը ենթադրում է մեղավորություն, որը կարող է արտահայտվել *ինչպես դիտավորության, այնպես էլ նաև անզգուշության ձևով*։ Ուստի տվյալ դեպքում դիտավորության բացակայությունը կամ սպառողին մոլորեցնելու նպատակի բացակայությունը, չի կարող դիտարկվել որպես վարչական պատասխանատվությունից ազատող հանգամանք։

Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողը բժշկական օգնություն և սպասարկում, դեղատնային գործունեություն, դեղերի արտադրություն, բժշկական միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի գովազդման ժամանակ գովազդում *չի նշել* կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը, մինչդեռ Հեռարձակողը՝ որպես տեսալսողական մեդիայի ոլորտում գործունեություն իրականացնող լիցենզավորված սուբյեկտ,

պարտավոր է իմանալ և պահպանել տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները։

Համաձայն Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ կարգավորող պետական մարմինը՝ սույն օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ։

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.
2) տուգանք.
3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողի կողմից «Գովազդի մասին» օրենքի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի
2-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետը, 14-րդ հոդվածի 7-րդ մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերը, 42-րդ հոդվածը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 11-րդ կետերը, 27-րդ հոդվածի 1-ին մասը, «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի $7^3$-րդ մասը, 24-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի
16-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով սահմանված 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2026թ. հունվարի 12
ք.Երևան